ՆԱՆԵ ՋԵՅՆԱԼՅԱՆ
ՀՀ պետական կառավարման
ակադեմիայի ասպիրանտ

ԱՆՁԻ ԱՐԺԵՀԱՄԱԿԱՐԳԻ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ԱՇԽԱՐՀԱՅԱՑՔԱՅԻՆ ՆԱԽԱԴՐՅԱԼՆԵՐԸ

Հոդվածում քննարկվում են «անձնային արժեք» հասկացության սահմանումների և մոտեցումների բազմատեսակությունը, որոնք ներկայացվում են մի քանի խմբերում: Ներկայացվում են արժեքային համակարգի ձևավորման հիմնական գործոնները:

Հիմնաբառեր. անձնային արժեք, սոցիալականացում, ներքնայնացում, զարգացման օրինաչափություններ:

Անձնային արժեքների խնդիրը քննարկվել է տարբեր գիտակարգերի շրջանակներում և տրվել դրանց բազմաթիվ սահմանումներ: «Անձնային արժեք» հասկացությունը կիրառվում է տարբեր նշանակություններով: Սակայն միասնական կարծիք այս հասկացության սահմանման վերաբերյալ գոյություն չունի: Գրականության մեջ առանձնացնում են «արժեք» հասկացության առավել քան հարյուր սահմանումներ, որոնցում առաջարկվում են տվյալ խնդրի դիտարկման տարբեր մոտեցումներ և կողմեր: Մեր առջև նպատակ ենք դրել խմբավորել տարբեր տեսություններում անձի արժեքների վերաբերյալ ներկայացվող տեսակետները, ինչը հնարավորություն կտա բացահայտելու արժեքների ձևավորման հիմնական օրինաչափությունները:

Մասնագիտական գրականության վերլուծության արդյունքները ցույց են տալիս, որ յուրաքանչյուր հասարակություն, սոցիալական խումբ, հասարակական խմբավորում ստեղծում է իրեն հատուկ ընդհանուր և յուրահատուկ արժեքային համակարգեր և վարքականոններ, որոնք արտահայտում են նրանցում գերակայող հետաքրքրությունները և նպատակները: Այդ հասարակությանը պատկանող մարդը ընդունում է դրանք որպես իր վարքի չափանիշ:

Անձնային արժեքը մարդու մասին գիտությունների՝ փիլիսոփայության, հոգեբանության, մանկավարժության, սոցիոլոգիայի և այլ գիտությունների կարևոր խնդիրներից մեկն է: Չնայած որ արժեքների հոգեբանական սահմանումների մեծամասնությունը հիմնվում են արժեքների և արժեքային կողմնորոշումների փիլիսոփայական և սոցիոլոգիական հայեցակարգերի վրա, անձնային արժեքների հոգեբանական հասկացումը էապես տարբերվում է այլ գիտություններում արժեքների մեկնաբանությունից: Անձի տեսություններում «անձնային արժեք» հասկացությունը մեր

կողմից հանգամանորեն վերլուծվել է «Անձնային արժեք» հասկացությունն անձի տեսություններում» հոդվածում [1]:

Մոտեցումների և սահմանումների բազմատեսակության մեջ «արժեք» հասկացությունը պայմանականորեն կարելի է բաժանել մի քանի խմբի: Առաջին խմբում ներառված են հասկացություններ, որոնց հեղինակներն արժեքները դիտում են որպես կարծիք, պատկերացում կամ համոզմունք: Որպես այս ուղղության ներկայացուցիչ՝ կարելի է համարել Մ. Ռոկիչին, ով արժեքները համարում է կայուն համոզմունք այն համատեքստում, որ վարքի որոշակի ձևը կամ գոյության վերջնական նպատակը նախընտրելի է անձնային կամ սոցիալական տեսանկյունից [20]:

Երկրորդ խմբում կարելի է ներառել այն սահմանումները, որոնց հեղինակները «արժեքը» (կամ «արժեքային կողմնորոշումը») սահմանում են որպես սոցիալական դիրքորոշումների կամ հետաքրքրությունների տարատեսակ կամ նմանատիպ երևույթ (Մ. Վեբեր, Ա. Զդրավոմիսլով, Դ. Ուզնաձե): Դ.Ուզնաձեն դիրքորոշումը մեկնաբանում է որպես անձի կամ խմբի սոցիալական փորձի միջոցով ձևավորված նախատրամադրվածություն սոցիալապես նշանակալի օբյեկտները ընդունելու և գնահատելու, ինչպես նաև որոշակի գործողություններին անձի կամ խմբի պատրաստվածությունը, որոնք ուղղված են սոցիալապես նշանակալի օբյեկտներին [15]: Ա.Զդրավոմիսլովի կարծիքով՝ արժեքային կողմնորոշումները անձի դիրքորոշումներն են նյութական և հոգևոր մշակույթի արժեքների նկատմամբ [9]: Մ. Վեբերը արժեքը մեկնաբանում է որպես այս կամ այն պատմական ժամանակաշրջանի դիրքորոշում, որպես դարաշրջանին հատուկ հետաքրքրասիրության ուղղություն [6]:

Սահմանումների հաջորդ խումբը միավորում է մոտ/կից հասկացություններ, ինչպիսիքն են՝ պահանջմունքներն ու շարժառիթները (Գ.Դիլիգենսկի, Բ.Դոդոնով, Ֆ.Վասիլյուկ):

Կարելի է առանձնացնել սահմանումների մեկ խումբ ևս՝ որպես իմաստ (Դ. Լեոնտև, Ա. Սեռի, Մ. Յանիցկի, Վ. Ֆրանկլ):

Հոգեբանական գիտության բնագավառում արժեքների մեկնաբանության բազմազանության մեջ առավել տարածում ունի այն մոտեցումը, որում արժեքը դիտարկվում է որպես հասարակության կենսագործունեության որոշակի արդյունք: Այդ մոտեցումը ցայտունորեն արտահայտված է փիլիսոփաների և սոցիոլոգների գիտական աշխատություններում: Հոգեբանական գիտության բնագավառում անձնային արժեքների հասկացման գերակայող մոտեցումներից մեկը այն է, որ արժեքը դիտվում է որպես պահանջմունքներին և շարժառիթներին համարժեք հասկացություն: Մասնավորապես՝ անձնային արժեքները և իմաստը կենտրոնական տեղ են զբաղեցնում հումանիստական հոգեբանության մեջ:

Անձի արժեքային համակարգի ձևավորման և շարժընթացի խնդիրը ընդունված է դիտարկել հոգեկան զարգացման ընդհանուր օրինաչափությունների համատեքստում: Այն անմիջականորեն կապված է տարիքային զարգացման առանձնահատկությունների հետ: Վերլուծելով անձի իմաստային ոլորտի ձևավորման և զարգացման խնդիրը՝ Ա.Սեռին պնդում է, որ այդ գործընթացները արտացոլում են տարիքային և անձնային զարգացման ընդհանուր օրինաչափությունները: Դ.Լեոնտևը նշում է, որ յուրաքանչյուր անձի զարգացման գործընթաց բնութագրվում է սոցիալական հանրության արժեքների և դրանց փոխակերպումների, այսինքն՝ անձնային արժեքների կերպափոխմամբ [12]: Տվյալ խնդիրը ներկայացվել է հոգեբանության տարբեր դպրոցների և ուղղությունների ներկայացուցիչների կողմից: Ռուսական հոգեբանության մեջ այս խնդրին անդրադառնում են Վ. Ալեքսեևան, Ս. Բուբնովան, Գ. Բուդինայտեն, Տ. Կոռնիլովան, Ա. Վոլոչկովը, Ե. Երմոլենկոն, Դ. Լեոնտևը, Ա. Սեռին, Վ. Չուդնովսկին, Մ. Յանիզկին և ուրիշներ: Որպես անձնային արժեքների ձևավորման նախադրյալներ՝ դիտարկվում են սոցիալականացման առանձնահատկությունները, տարիքային զարգացման փուլերը, երեխայի ինտելեկտուալ զարգացումը, կրթությունը, տեղեկույթը, մակրո- և միկրոմիջավայրի առանձնահատկությունները: Անձի արժեքային համակարգի ձևավորումն իրականանում է մի շարք գործոնների ազդեցությամբ: Այդ գործոններն են ընտանիքը, հասարակությունը, դպրոցը, շրջապատի սոցիալական արժեքները և այլն:

Ն. Ժուրավլյովան արժեքային կողմնորոշումների ձևավորման կարևոր նախապայման է համարում վաղ սոցիալականացման պայմանները [8]:

Արժեքային համակարգի ձևավորումն անհնար է պատկերացնել հասարակությունից, մարդկանց հետ շփումից զատ: Անձի արժեքների համակարգը ձևավորվում է սոցիալականացման ընթացքում ինտերիորիզացիայի (ներքնայնացման)՝ հասարակական-քաղաքական, բարոյական, գեղագիտական իդեալների (հասարակական փորձ և մշակույթ) յուրացման միջոցով, որոնք բնորոշ են տվյալ սոցիալական հանրությանը: Արժեքային համակարգի ձևավորումն ընթանում է դաստիարակության և կրթության ընթացքում սոցիալական փորձի յուրացման միջոցով: Անձնային արժեքները ձևավորվում են սոցիալականացման ամբողջ ընթացքում (Ռուչկա՝ 1976, Անանև՝ 1996, Լեոնտև՝ 1998, Սուրինա՝ 1996) [8]:

Ժ. Պիաժեն անձի արժեքային կողմնորոշումների զարգացումը կապում է ինտելեկտուալ զարգացման մակարդակի հետ: Նա համարում էր, որ բարոյական դատողությունների ներքնայնացումը երեխաների մոտ տեղի է ունենում զարգացող մտածողական կառուցվածքների և աստիճանաբար ընդլայնվող սոցիալական փորձի փոխազդեցության արդյունքում

[10]: Եթե զարգացման առաջնային փուլում երեխան բարոյական նորմերը դիտարկում է որպես հաստատված և անփոփոխ, իսկ արարքի բարոյական գնահատման չափանիշը բացառապես դրա հետևանքներն են, ապա վերացական մտածողության զարգացմանը զուգընթաց (6-7 տարեկան) երեխայի մոտ առաջանում է արարքը ոչ միայն հետևանքների, այլև մտադրության տեսանկյունից գնահատելու ընդունակություն: Այսպիսով, երեխայի վերացական ինտելեկտի զարգացմանը զուգընթաց ձևավորվում է բարոյական գնահատականների հարաբերականության, դրանց պայմանական բնույթի մասին պատկերացում, այսինքն՝ «բարոյական ռեալիզմը» փոխարինվում է «բարոյական հարաբերականությամբ» [16]:

Լ. Կոլբերգը, հստակեցնելով Ժ. Պիաժեի տեսակետը երեխայի բարոյական զարգացման խնդրին, առանձնացնում է դրա մակարդակները և փուլերը: Առաջին՝ նախահամաձայնեցման մակարդակում բարոյական արժեքներին ենթարկվելը տեղի է ունենում պատժից խուսափելու կամ խրախուսանքի եսասիրական պատկերացումներից ելնելով: Համաձայնեցման մակարդակում շրջապատի նորմերը և արժեքները ընդունվում են ըստ առաջնայնության (референтности), արտաքին հեղինակության հիման վրա, հետագայում նաև, ըստ սպասելիքների համապատասխանության, մտերիմների անհավանությունից կամ քննադատությունից խուսափելու ցանկության: Հաջորդ մակարդակում ձևավորվում են լայն սոցիալական նորմերին անձի ուղղվածությունը, մեղքի զգացումից խուսափելու ձգտումը: Հետհամաձայնեցման մակարդակում երեխան սկսում է հետևել սեփական բարոյական սկզբունքներին, որոնք չեն համապատասխանում շրջապատի արժեքներին: Այս փուլում անձնային արժեքներն որոշվում են վերացական, համընդհանուր արժեքներով, տեղի է ունենում դրանց համաձայնեցում հասարակության և ուրիշների արժեքների հետ, կողմնորոշումն ուղղվում է դեպի խղճի կանոնները, համընդհանուր էթիկական սկզբունքները [19]:

Լ. Վիգոտսկին քննադատում է Ժ. Պիաժեի հայեցակարգում ներկայացվող սոցիալականացման հասկացումը՝ որպես սոցիալական միջավայրի արտաքին ճնշում, որը երեխային ստիպում է ընդունել մտքի օտար սխեմաներ: Լ. Վիգոտսկին և նրա հետևորդները զարգացրել են ներքնայնացման մասին պատկերացումը որպես սոցիալականացման կառուցակարգ: Լ. Վիգոտսկու պնդմամբ՝ ներքնայնացումն անձի կենսաձևի անցումն է սոցիալականից դեպի անհատականը (ներհոգեկանը) [7]:

Ա. Լեոնտևը առանձնացնում է ներքնայնացումը՝ որպես անձնային արժեքների և իմաստների ձևավորման կարևորագույն կառուցակարգ՝ ներկայացնելով այն որպես անձի հոգեկանի ներքին կառույցների ձևա-

վորման գործընթաց՝ արտաքին սոցիալական գործունեության կառույցների յուրացման շնորհիվ կամ առարկայական գործունեության կառուցվածքի՝ գիտակցության ներքին պլանի կառուցվածքի փոխակերպման շնորհիվ [11]: Բ. Անանևը դիտարկում է ներքնայնացումը որպես հասարակական փորձի և մշակույթի, որոշակի դերերի և գործառույթների յուրացման արդյունք: «Շարժառիթավորման և արժեքների բոլոր ոլորտները սահմանվում են որպես անձի հասարակական կայացում» [2]:

Դ. Լեոնտևը ներքնայնացման գործընթացը ներկայացնում է որպես սոցիալական խմբի արժեքներից անցում դեպի անձնային արժեքներ: Սոցիալականացումը, ըստ Լեոնտևի, սոցիալական հանրության արժեքների յուրացումն է և դրանց փոխակերպումը անձնային արժեքների [12]:

Ն. Ժուրավլյովան անձի արժեքային համակարգի ձևավորման գործում կարևորում է անձի կյանքի մակրո- և միկրոսոցիալական պայմանները, ինչպես նաև նրա սոցիալական և մասնագիտական բնութագրերը: Մակրոսոցիալական պայմանների շարքում կարևոր են համարվում հասարակության կյանքի սոցիալ-տնտեսական, սոցիալ-մշակութային, սոցիալ-քաղաքական և գաղափարական, ինչպես նաև հոգևոր պայմանները, սոցիալական նորմերը (բարոյականության, իրավունքի, կրոնի և այլն), պատմական ժամանակահատվածի առանձնահատկությունները, տարածաշրջանային պայմանները, հասարակությունում գերակշռող արժեքները [8]:

Անձի արժեքների համակարգը հիմնված է այն հասարակության գաղափարախոսության վրա, որին նա պատկանում է: Տարբեր գաղափարախոսությունների դեպքում առաջնությունը կարող է տրվել տարբեր արժեքների:

Անհատական և սեռատարիքային տարբերություններին զուգահեռ կան նաև արժեքային կողմնորոշումների ընդհանուր բնութագրեր, որոնք բնորոշ են օնտոգենեզի որոշակի փուլերին: Արժեքային կողմնորոշումների փոփոխությունների գործընթացը, դրանց որակական վերակառուցումն առավել կերպով տեղի է ունենում երեխայի՝ օնտոգենեզի մի փուլից մյուսին անցնելու շրջանում: Հենց այդ ժամանակ ի հայտ եկող նորագոյացությունների հիման վրա են առաջանում երեխայի արժեքային կողմնորոշումների փոփոխության միտումները, որոնք հակասության մեջ են մտնում գոյություն ունեցող շարժառիթների և պահանջմունքների համակարգի հետ՝ կանխորոշելով դրանց որակական վերակառուցումը [8]:

Սոցիալականացման հոգեբանական կառուցակարգերը՝ ներշնչանքը և նմանարկումը, ներկայացված են Գ. Տարդի և Ջ. Բոլդուինի սոցիալ-հոգեբանական հայեցակարգերում: Գ. Տարդը պնդում է, որ նմանարկումը հասարակությունում ունի նույնպիսի նշանակություն, ինչպես և ժառանգականությունը կենսաբանության մեջ: Ջ. Բոլդուինը համարում էր, որ

այլոց մտքերի, վարքի նմանարկումն անձի մեջ ձևավորում է հասարակությունում ապրելու ընդունակություն: Իր անձի գիտակցումը երեխայի մոտ զարգանում է աստիճանաբար, շրջապատող միջավայրի հանդեպ նմանարկման միջոցով:

Սոցիալական արժեքների և իմաստների յուրացման մեկ այլ կառուցակարգ է նույնականացումը: Վ. Լեոնտևը պնդում է, որ նույնականացման կառուցակարգի հիմնական բաղադրիչն անձի համար նշանակալի արժեքների ապրումն է, իսկ անձի զարգացումն ընթանում է անձնային իմաստների առանձնահատուկ կրկնօրինակման միջոցով (Леонтьев В. Г., 1992, с. 80):

Անձն իր զարգացման ընթացքում ներգրավվում է տարբեր փոքր և մեծ խմբերի մեջ: Դրանցից յուրաքանչյուրի կյանքում մասնակցությունն անհատի մեջ ձևավորում է որոշակի բնորոշ գծեր: Նրա անձնային հատկությունները ձևավորվում և զարգանում են կախված որոշակի սոցիալական շերտին, ազգին, էթնիկ խմբին, մասնագիտական կատեգորիային, ընտանիքին և այլ խմբերին պատկանելությունից: Աշխարհի մասին պատկերացումները, բարոյական հայացքները և համոզմունքները, մտածելակերպը և աշխարհայացքը, հետաքրքրությունները, ձգտումները և արժեքները պայմանավորվում են խմբային գիտակցության առանձնահատկություններով, որում անձը ձևավորվում է և որում ընթանում է նրա առօրյա գործունեությունը [8]:

Փոքր սոցիալական խումբը ոչ միայն անձին առաջարկում է որոշակի արժեքներ, այլև ինչ-որ չափով ազդում է անձի վրա՝ ուղղորդելով նրան դեպի այդ արժեքները: Մի կողմից խումբը և դրա առանձին անդամներն են ազդեցություն գործում անձի վրա, մյուս կողմից՝ անձն ինքն է ազդեցություն գործում խմբի մյուս անդամների և ամբողջ խմբի վրա: Հարմարվելով, ինտեգրվելով և անհատականանալով խմբում՝ յուրաքանչյուր անձ, իր հերթին, ազդեցություն է ունենում խմբի, դրա արժեքների, արժեքային կողմնորոշումների և արժեքային դիրքորոշումների վրա [8]:

Դ. Լեոնտևը համարում է, որ սոցիալական արժեքների յուրացումը միշտ միջնորդավորված է անհատի համար ռեֆերենտային փոքր խմբերի արժեքներով: Նա շեշտում է, որ անհատական զարգացման նախնական փուլերում այդպիսի խումբ է ընտանիքը, իսկ դեռահասության տարիքում՝ հասակակիցների խումբը [12]:

Ա. Պետրովսկին առանձնացնում է մի շարք գործընթացներ, որոնցում տեղի է ունենում անձի արժեքային կողմնորոշումների համակարգի ձևավորումը և զարգացումը: Այդ գործընթացներն են պերսոնալացումը, որը ներառում է հարմարումը (որպես անհատի կողմից սոցիալական նորմերի և արժեքների յուրացում), անհատականացումը (որպես սեփական «Ես»-ի

արժեքների ամրապնդում) և ինտեգրումը (որպես անձի և խմբի արժեքների միջև առկա հակասությունների վերացում՝ դրանց փոխակերպման ճանապարհով) [14]:

Գ. Մ. Անդրեևան, որպես արժեքների անհատական համակարգի ձևավորման միջավայրային գործոններ, առանձնացնում է ընտանիքը, դպրոցը, աշխատանքային կոլեկտիվը, որոնք «սոցիալական փորձի միջնորդ» են, որոնցում անձը հաղորդակցվում է նորմերի և արժեքների համակարգի հետ [3]:

Ա. Վ. Մուդրիկն առանձնացնում է սոցիալականացման գործոնների չորս խումբ: Հեղինակը ***մեգագործոնների*** շարքին է դասում համաշխարհային գործընթացները, որոնք այս կամ այն չափով ազդեցություն են գործում բոլոր մարդկանց սոցիալականացման վրա: Հաջորդ խումբը ներկայացնում են ***մակրոգործոնները***. դրանք են պետությունը, էթնոսը, հասարակությունը, որոնք ներգործում են գերազանցապես տվյալ երկրում ապրող անձանց սոցիալականացման վրա: Սոցիալականացման գործոնների հաջորդ խումբն են կազմում ***մեզոգործոնները***, որոնք միևնույն երկրում համատեղ ապրող կամ միասին հաղորդակցվող մեծ խմբերի սոցիալականացման պայմաններն են: Դրանք են քաղաքը, գյուղը, համայնքը, հեռուստատեսությունը, տեղեկատվական այլ համակարգերը և այլն: ***Միկրոգործոններն*** անձի վրա անմիջապես ներգործություն ունեցող գործոններն են, ինչպիսիք են՝ ընտանիքի, հասակակիցների և շրջապատի հետ շփումը, դաստիարակչական կրթական կազմակերպությունները, ինչպես նաև հասարակական, կրոնական և այլ նմանատիպ կազմակերպությունները: Սոցիալականացումը (հանդես է գալիս երկու՝ առաջնային և երկրորդային սոցիալականացման մակարդակներով: Առաջինի մեջ հասկացվում է փոքր խմբերում միջանձնային հաղորդակցումը, ինչպիսիք են՝ ընտանիքը, հասակակիցների, մտերիմների, ուսուցիչների և այլ խմբերը: Երկրորդային սոցիալականացումը տեղի է ունենում սոցիալական մեծ խմբերի և ինստիտուտների մակարդակում: Դրանք են ֆորմալ կազմակերպությունները, կրթական, զինվորական ու պետական այլ հաստատությունները և այլն [13]:

Մուդրիկի առաջարկած ձևաչափը նման է Ու. Բրոնֆենբրենների ներկայացրած «էկոլոգիական համակարգերի ձևաչափին», ըստ որի՝ անձի կենսամիջավայրը համակենտրոնորեն ընդլայնվող համակարգ է, որտեղ յուրաքանչյուր նախորդ համակարգ ներառված է հաջորդ ավելի լայն համակարգի մեջ: Ավելի բարձր մակարդակի համակարգերն ազդում են ստորև գտնվողների վրա [5]:

Կյանքի տարբեր ոլորտների նկատմամբ վերաբերմունքը մարդու մեջ ձևավորվում է ի թիվս այլ գործոնների, կրթության ընթացքում ստացած

տեղեկույթի միջոցով: Կրթության սոցիալական ինստիտուտի միջոցով իրականանում է արժեքային մշակույթի փոխանցումը սերնդեսերունդ:

Վ. Աֆանասևը գրում է, որ ընտանիքում և դպրոցում անձի ձևավորման գործընթացը իրականանում է նախևառաջ «տեղեկատվական ուղիով . անձին ուրիշների կողմից ստացվող համապատասխան տեղեկություն փոխանցելու միջոցով»: Մշակույթի, հասարակության արժեքների յուրացումը իրականանում է հասանելի տեղեկատվական միջոցների, մարդկանց հետ շփման միջոցով [4]:

Անձի արժեքային համակարգի ձևավորման գործում տեղեկույթի ազդեցության կառուցակարգերն անհրաժեշտ է առավել հանգամանորեն վերլուծել առանձին ուսումնասիրությունների շրջանակներում:

Այսպիսով, ըստ մասնագիտական գրականության վերլուծության արդյունքների, անձնային արժեքների մասին պատկերացումները կարելի է ներկայացնել հինգ խմբով. արժեքը՝ որպես պատկերացում, դիրքորոշում, արժեքը՝ որպես պահանջմունք կամ շարժառիթ, արժեքը՝ որպես իմաստ և որպես հասարակության կենսագործունեության արդյունք:

Անձի արժեքային համակարգի ձևավորման և շարժընթացի խնդիրը ընդունված է դիտարկել որպես հոգեկան զարգացման ընդհանուր օրինաչափություն: Այն անմիջականորեն կապված է տարիքային զարգացման առանձնահատկությունների հետ: Այդ գործընթացում հատկապես կարևորվում է ներքնայնացման գործընթացը՝ որպես սոցիալական խմբի արժեքներից անցում դեպի անձնային արժեքները: Արժեքային համակարգի ձևավորման գործում անհրաժեշտ է հաշվի առնել ինչպես օբյեկտիվ, այնպես էլ սուբյեկտիվ մի շարք գործոններ, որոնց թվում են սոցիալական պայմանները, անձի սոցիալականացման բնութագրիչները, շարժառիթային ոլորտի առանձնահատկությունները և անձնային բնութագրիչները:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԱՂԲՅՈՒՐՆԵՐ

1. ***Հեյնայան Ն. Ա.,*** Անձնային արժեք հասկացությունն անձի տեսություններում, Հանրային կառավարում, «Պետական ծառայություն» Երևան, 2/2017, 191 էջ:

2. ***Ананьев Б. Г.***, О проблемах современного человекознания. М.: Наука, 1977, 344 с.

3. ***Андреева Г. М.,*** Психология социального познания. М.: Аспект-Пресс, 2000, 288 с.

4. ***Афанасев В. Г.,*** Социальная информация и управление обществом. М.: Политиздат, 1975, 408 с.

5. ***Бронфенбреннер У.,*** Два мира детства. Дети в США и СССР: Пер. С англ. - М., 1976, 165 с.

6. ***Вебер М.,*** Основные социологические понятия, Избр. произведения, Сост., общ. ред. и послесл. Ю. Н. Давыдова. М.: Прогресс, 1990. сс. 602-643.

7. ***Выготский Л. С.,*** Педагогическая психология / под ред. В. В. Давыдова. - М.: Педагогика-Пресс, 1996. - 536 с.

8. ***Журавлева Н. А.,*** Психология социальных изменений: ценностный подход. - М.: –зд-во «Институт психологии РАН», 2013. – 524 с.

9. ***Здравомыслов А. Г.,*** Потребности, интересы, ценности. М.: Политиздат, 1986. – 222 с.

10. ***Крайг Г.,*** Психология развития [Текст]: Пер. с англ. / Г. Крайг. – СПб.: Питер, 2000. – 992 с.

11. ***Леонтьев А. Н.,*** Деятельность, сознание, личность. - М.: Политиздат, 1975, -304 с.

12. ***Леонтев Д. А.,*** Развитие личностных ценностей в общественном контексте, Вестник Московского Университета. Сер. 14. Психология. 1997. №1. сс. 20-27.

13. ***Мудрик А. В.,*** Социализация человека: Учеб. пособие для студ. высш. учеб. заведений, М.: “Издательский центр Академия”, 2004, 304 с.

14. ***Петровский А. В.,*** Личность. Деятельность. Коллектив. М.: Политиздат, 1982, 255 с.

15. ***Узнадзе Д. Н.,*** Психология установки. СПб.: Питер, 2001. «Психология-классика», 416 с.

16. ***Флейвелл Дж.,*** Генетическая психология Жана Пиаже [Текст]: Пер. с англ. / Дж. Флейвелл. М.: Просвещение, 1967, 623 с.

17. ***Яницкий М. С.,*** Ценностные ориентации личности как динамическая система. Кемерово: Кузбассвузиздат, 2000, 204 с.

18. ***Frankl V. E.,*** Man’s search for meaning: The classic tribute to hope from the Holocaust. Rider, UK, 2004, p. 147.

19. ***Kohlberg L.,*** Moral stages and moralization: The cognitive developmental approach [Text] / L. Kohlberg // Moral development and behavior: Theory research and Social issues. - N.Y., 1976. - P. 31-53. (287)

20. ***Rokeach M.,*** The Nature of Human Values. N.Y.: Hie Free Press, 1973.

НАНЕ ЗЕЙНАЛЯН
Аспирант Академии государственного управления Республики Армения

МИРОВОЗЗРЕНЧЕСКИЕ ПРЕДПОСЫЛКИ ФОРМИРОВАНИЯ ЛИЧНОСТНЫХ ЦЕННОСТЕЙ

В статье анализируются различные интерпретации понятия личностной ценности, делается попытка сгруппировать их в нескольких категориях. Представлены основные факторы формирования системы ценностных ориентации.

Ключевые слова: личностные ценности, социализация, интериоризация, закономерности развития.

NANE ZEYNALYAN
PhD Student of the Public Administration Academy of the Republic of Armenia

IDEOLOGICAL PREMISES OF THE FORMATION OF PERSONAL VALUES

The article presents different interpretations and definitions of the concept of personal values. The diversity of interpretations was presented in a few groups. In the article were discussed the factors of formation of the personal values system.

Keywords: personal values, socialization, interiorization, development patterns.